www.police.am
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչություն
էլ. փոստ press@police.am, Հեռ. 011-56-02-63, 011-54-73-14

25/ 310 **06.06.2018 թ.**

Ինֆորմացիայի ազատության

կենտրոնի նախագահ

Շուշան Դոյդոյանին

Ձեր 31.05.2018 թ. ուղարկած հարցմանն ի պատասխան հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանությունում 05.06.2018 թ. դրությամբ թափուր են հետևյալ խմբերի հաստիքները՝

- բարձրագույն խմբի պաշտոններում – 2 հաստիք,
- գլխավոր խմբի պաշտոններում – 29 հաստիք,
- ավագ խմբի պաշտոններում – 32 հաստիք,
- միջին խմբի պաշտոններում – 323 հաստիք,
- կրտսեր խմբի պաշտոններում – 622 հաստիք,
- տեխնիկական սպասարկում իրականացնողների պաշտոններում – 38 հաստիք,
- քաղաքացիական աշխատանք կատարողների պաշտոններում – 47 հաստիք։

Հավելենք, որ ՀՀ ոստիկանությունում թափուր հաստիքները համալրելու առաջնահերթությունը տրվում է ոստիկանության ծառայողներին, ոստիկանության կադրերի ռեզերվում գտնվողներին, ինչպես և ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում բարձրագույն կամ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստացած ծառայողներին։

ՀՀ ոստիկանության ՀԿԼ վարչություն